

ԳՈՂՈՒՆԻՈՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՆԵՐ

ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Գողոնիոյ Մայր եկեղեցին յիրաւի Գեւր-
մանիոյ ամենագեղեցիկ յիշատակա-
րաններէն մէկն է. անոր համար թէ
գերմանացի իշխաններ և թէ բոլոր ազ-
գութիւնն ձեռնադրու եղաւ այս շինուա-
ծոյս կատարմանը:

Յամին 814, Մեծին Կարողութեան
գաւորութեան վերջի ժամանակները,
Գողոնիոյ Մայր եկեղեցւոյն առաջին
քարը Հիւտեպոլտ եպիսկոպոսին ձեռ-
քովը դրուեցաւ: 873ին Կատարեցաւ, և
նոյն տարին օծուեցաւ: Յամին 1247,
անյայտ պատճառով մը, այն շինուած-
քը այրեցաւ: Ի 1248 Գորատոս Հոս-
շգառէնի եպիսկոպոսը նոր Մայր եկե-
ղեցւոյն առաջին քարը դրաւ ամենա-
մեծ հանգիսի: շինուածոյն մեծու-
թեան պատճառաւ աշխատութիւննե-
րը կամաց կամաց առաջ կ'երթային,
այնպէս որ 1322ին հազիւ բարձրա-
գոյն դարձ շինուած էր, և 1439 ամին
հիւսիսային կողմը շինուած էր: Նկա-
րուած պատուհաններէն մէկը՝ որ դեռ
կայ, 1509 թուականը կը կրէ վրան:
Շէնքը այս կէտիս հասնելով, առ ժա-
մանակ մը դադրեցաւ քաղաքական
պարագայից պատճառաւ:

Հարիւր սիւնները ինչուան մեծ կա-
մարը բարձրացած էին և կը բռնէին
փայտեայ պարզ յատակ մը: Երկու աշ-
տարակներէն, որոնք 476 ոտք բարձր
պիտի ըլլային, մէկը հազիւ ի հիմանէ
վեր բարձրացած էր, մընք 189 ոտնա-
շափ էր: Գրեթէ 300 տարի անցաւ, և
այն տաճարը բարբարոսաց ձեռքը
մնաց, կողոպտուեցաւ: և ոչ իսկ սուրբ
տապանակը ազատ մնաց: Առաջ խո-
րանը 1760 և 1770 տարիներուն մէջ
քանդեցաւ և պատուական քարերը
ուրիշ գործածութեան տարուեցան:

Անցեալ դարուն վերջի ամաց պատե-

ՊՐԱԿ Գ.


րազմներուն ժամանակ, այն տաճարը
գինուորաց շտեմարան եղաւ, 1802ին
Գողոնիա Գաղղիոյ անցաւ, և վարչա-
կան ժողովը Նաբոլէոնէն տարին 40,000
ֆրանգ եկամուտ ուզեց, որպէս զի
մեծ շէնքին աւերակները նորէն շինէ:
Բայց խնդիրքը լսելի չեղաւ: Միայն
1814ին Նաբոլէոնի ինկնալէն վերջը,
Փրեզերիկոս Շէնքէլ, Յ. Կէօրթէս, և
Պուասսերէ եղբարք իրենց աշխատու-
թիւններով ցուցին Գողոնիոյ Մայր ե-
կեղեցւոյն պատմական և արուեստա-
կան յարգը, այնպէս որ Բրուսիոյ Տե-
րութիւնն մտածեց թէ ինչ կերպով
կրնար պահել և ըմբռնել այն շէնքն:
Բայց քաղաքական պարագայից պատ-
ճառաւ, ինչուան 1824 տարին չկրցաւ
շէնքը առաջ տանիլ: Այն ատեն ընկե-
րոսքիւնն հաստատուեցաւ որպէս զի
կարենան այն հրաշակերտ եկեղեցին
ըմբռնել: Այս ընկերութիւնն մինչև
1842 չկրցաւ գործն սկսիլ, որովհետեւ
բոլոր այս ժամանակս պէտք եղած
գումարը ժողովելու գործածեց, այնպի-
սի մեծ գործի մը համար: Վերմանիոյ
ամեն իշխանաց, առանձնականաց և
փնակահանութեանց ձեռքով, շէնքը
շատ մեծ յառաջադիմութիւն ըրաւ:
Գործողութեան գործակից եղան նշա-
նաւոր ճարտարագործք և քանդակա-
գործք:

Յամին 1848 օգոստ. 14, շէնքին սկը-
զեմաւորութեան վեցերորդ դարագար-
ձը տօնուեցաւ: Այն ժամանակէն վերջը
գործերը հիւսիսային և հարաւային
դրանց վրայ եղան, Շփանդալը և Մօր
երևելի քանդակագործներուն դժա-
գորութեամբ, այնպէս որ 1855ին այն
մեծամեծ դռները ըմբռնած էին: Ի 1861
յուլիս 31 մեծ կամարը վճարեցաւ:
Ի 1880 օգոստոս 14 վերջի քարը դը-

բուած էր, որով կը լրանար Մայր եկեղեցին:

Մայր եկեղեցին խաչաձև շինուած է, և 6166 քառակուսի մեզր տեղ կը բռնէ. 7 խորաններով որ կը շրջապատեն դասը, որուն բարձրութիւնը 200 ոտք է: Մայր եկեղեցւոյն երկայնութիւնը 433 ոտք է. լայնութիւնը 144: Կամարը 161 ոտք բարձրութիւն ունի և կեցած է 100 սիւներու վրայ, որոնք չորս բաժնուած են, այսինքն 4 նաւ (navata) ունին, իւրաքանչիւրն 25 սիւններով:

ամեն սիւն 150 ոտք բարձրութիւն ունի. ամենքն ալ խորաքանդակ: Հինգ մեծ պատուհանները, որոնք Մայր եկեղեցւոյն հիւսիսային կողմը դրուած են, Լուգովիկոս Ա Պապի երայի թագաւորը շինել տուաւ, Մոնաքոյի թագաւորական ապակեղինաց գործատանց մէջ, Հերձ և Հինմիւլլէր նկարչաց առաջնորդութեամբ եղան և ստուարաթուղթերը Յ. Ֆիշեր և Հէլլ-Մայէր նկարչաց ձեռքով կատարուեցան: Ի 1844 սկըսուեցան և ի 1848 ամին աւարտեցան:



Մայր եկեղեցի Գոլոմիոյ ի 1850 դեռ ի շինութեան:

Հարաւային կողմի պատուհաններուն վրայ 1508 և 1509 թուականները կան, երկու գլխաւոր աշտարակները 156 մեզր բարձրութիւն ունին, և այն որ չէնքին մէջ տեղ կը կենայ 109 մեզր:

Մայր եկեղեցւոյն տօնախմբութիւնը լրացրնելու համար, Կայսրը ուզեց որ միջին զանգակատան մեծ զանգակը ձուլուի. և այս գործոյս համար, և ի յիշատակ յետագայից՝ գերմանացի


զինուորաց Գաղղիացւոց դէմ բրած յաղթութեանց, հրամայեց որ յիշեալ զանգակը Գաղղիացիներէն յափշտակուած 22 մեծաչափ թնդանօթներով ըլլայ: Այս զանգակին շինութիւնը յանձնուեցաւ պարոն Համմին Ֆրանքենթալի ձուլարանին, ի Բալադինա: Կը կըռէ 54300 քիլոկրամ ծանրութիւն և 3 մեզր և 7 հարիւրորդական մեզր բարձրութիւն ունի: Այս հսկայն

Կայսեր Զանգակ անուամբ յորջորջեցաւ:

Նկարուց և անդրեաց բազմութիւնը բացատրելը, զոր կը պարունակէ այն սրբավայրը, աննշան աշխատութիւն մը չէ. բաւական ըլլայ զիտնալ որ եօթը խորանները զարդարուած են 1400էն մինչև 1500 երևելի հեղինակաց պատկերներով, խորանին և ամբողջ շինուա-

ծոյն քանդակադործութիւնները նոյն պէս համբաւաւոր ճարտարագործաց արդիւնք են, և այն որ յաւէտ ազգին փառք է, բոլոր գործք գերմանացւոց:

ԶԳիտնիա տեսնողն անցեալ օրերուն մէջ, մեծ մայրաքաղաք մը կարծած պիտի ըլլայ: Հազարաւոր և բիւրաւոր անձինք ամեն շոգեկառաց հասնելուն. բոլոր տունները դրուագներով և դրօշ-



Մայր եկեղեցի Գոլմիոյ 'ի 1880 լմնցած:

ներով զարդարուած, խառնութե չքեղազարդք, և գրեթէ ամենքն ալ լուսանըկարներ, միտաներ, գրբեր, և այլն, դուրս դրած, որոնք կը յիշեցնէին Մայր եկեղեցւոյն պատմութիւնը. ճեմուլեաց վրայ նայող պատուհանի մը համար

մինչև 150 մարք կը վճարէին. անձի մը համար 10էն մինչև 30 մարք. վերնատունները և պատշգամբները գին չունէին: Հսկտեմբերի 15ին, ժամը 9 և 20 վայրկեանին, թնդանօթներուն հարուածը իմացուց Կայսեր և Կայսրու-

հւոյն հասնիլը, 200էն աւելի անձանց ընկերութեամբ: Քիչ վերջը Մայր եկեղեցւոյն մէջ սկսաւ հանդիսաւոր պատարագը, որուն ներկայ էին Սաքսոնիոյ թագաւորը, Պալիերայի Լէոբոլտ իշխանը, և բոլոր ուրիշ ուղղափառ իշխաններ և հրաւիրեալներ, մինչեւ երրորդութեան եկեղեցւոյն մէջ նորադանդից արարողութեամբ կը կատարուէր:

Ժամը 11ին, Մայր եկեղեցւոյն մէջ Զքեզ Աստուած գոհարանական աղօթքը երգուեցաւ, և թնդանօթներուն հարուածներուն, բոլոր զանգակներուն զարնելուն և մեծ զանգակին հնչելուն միջոց, երևեցան Մայր եկեղեցւոյն մեծ դրան վրայ կայսրն և կայսրուհին ուրիշ իշխանաց և հրաւիրելոց և անթիւ բազմութեան հետ: Իրաւցընէ վսեմ վայրկեան մ' եղաւ այն՝ ամենայն մասամբ: Ութսունը անցած ծեր կայսր մը, քովը կայսրուհին, չորս կողմի 10 իշխաններ, 500էն աւելի անձանց բազմութեամբ, այն նշանազգեստուց զանազանութիւնն, այն տեսակ տեսակ և ամփոփ կերպարանքները, յիշաւի այնպիսի տեսարան մը կը ձևացընէին զոր նկարագրել անկարելի է: Հազիւ թէ հասան վեհազունք, Գոլոնիոյ տղայք կայսեր և ուրիշ իշխանաց գիմաց ողջունի երգ մը հնչեցին: Քիչ մը վերջը, Մայր եկեղեցւոյն գլխաւոր ճարտարապետն յիշատակագիր մը կարդաց, յորում կը ծանուցանէր շինութեան սկզբնաւորելուն և կատարման տարին որուն ստորագրեցին կայսրն և բոլոր ուրիշ իշխաններն: Յետոյ երգ մը սկսաւ 200 անձանց ձայնակցութեամբ, եմիլիոս Ռիդերսաուս բանաստեղծին երկասիրու-

թեամբ և փրեդերիկոս Հիլլէր երգահանին երաժշտութեամբ:

Այն մագաղաթը, զոր կայսրն և ուրիշ իշխանք ստորագրէր էին, ծեփուեցաւ աշտարակներուն մէկուն մէջ, ետքը անոնց վրայ բարձրացան կայսերական տան և ազգային նշաններն:

Կայսրը հանդիսին մեծութեան վրայ ճառ մը խօսեցաւ, և իրեն փառք համարեցաւ այնչափ դաշնակցաց և վեհազանց մէջ գտնուիլ, որ այնքան աշխատեցան, այնպիսի մեծ գործոյ մը կատարման համար: Քիչ մը խիստ թուեցաւ եկեղեցւոյն երիցանց ժողովուն գլխաւորին խօսած ճառը, յորում կը խնդրէր կայսրէն որ Տէրութեան և ուղղափառաց մէջ խաղաղութիւն հաստատէ: Հանդէսը լմնցաւ Գոհոքիւն Աստուծոյ մեծ երգով, թնդանօթից գողալուն և զանգակաց զանգիւններուն հետ:

Ժամը 3ին, փառաւոր սեղան մը եղաւ 200 անձանց. իրիկունը Մայր եկեղեցին շքեղապէս լուսաւորուեցաւ ելեքտրական լուսով, նոյնպէս բոլոր քաղաքը, որուն ամեն հրապարակներուն մէջ ժողովրդական երգեր կը լսուէին:

Ամսոյն 16ին, ժամը 11 փառաւոր թափօր եղաւ, որուն մէջ խումբ խումբ կը ներկայացուէր Գերմանիոյ պատմութիւնը: Հանդիսատես եղան պատշգամներէն կայսրը բոլոր արքունեաք և հրաւիրեալները: Վեհ տեսարան մ'էր: Յետոյ կայսրը և կայսրուհին մեկնեցան ի Պատեն-Պատեն:

Իրիկունը, դարձեալ լուսաւորութիւն, և հանդիսին փակման համար, մեծ կոչունք մը տրուեցաւ հրաւիրելոց Գոլոնիոյ օստիկանութեան կողմանէ: